



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Nor Serount Armenian Cultural Association

tel: 429-7948, 293-4841

Թորոնթօ 4 Փետրուար 1982

Գերշ. Տ. Թորգոմ Մըր. Արքապիսկոպոս Մանուկեան
Արժանաւոր Առաջնորդ Հիւս. Ամերիկայի և Գանատայի

Նիւ Եորք

Մըրազան Հայր,

Մեծ ցաւ է զաղութիս համար Ս. Խաչ հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծխական խորհուրդի ու անոր ատենապետին կատարած վնասակար աշխատանքը, դատապարտելի:

Նոր Մերունդ Մշակութային Միութեան Վարչութեան հերթական ժողովին, անակնկալ այցելութիւնը ունեցանք կարգ մը յարգարժան ազգայիններու, որոնք միաձայնութեամբ կուզան ինդրելու ծեռդ Մըրազնութիւնէն որպէսզի գործնական քայլերով վերջ տայիր վերեւյիշեալ մարմնի գոյութեան:

Վստահ ենք որ թեմական կեղրոնական վարչութիւնը ժամանակը հասած սեպելով լուծարեի ենթարկէ և առժամեայ նշանակովի մարմին մը որոշէ զաղութիս սիրուած ու յարգուած վստահելի տրասու անդամներէ:

Հետեւեալ ազգայինները վստահութիւնը կը վայելէն զաղութիս ու պատրաստակամութիւն կը յայտնեն ծերդ վերին նախազահութեամբ գործողելու հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր օրէնքները ու տրամադրութիւնները:

Տիարք, Կարօ Խապայեան ✓

Սուրէն Էվրան

Մարտիկ Տէմիրճի

Ժիրայր Թորիկեան ✓

Օննիկ Թորոսեան

Ցակոբ Բանտէս

Եփրեմ Ստամպուլ ✓

Անդրէ Ջիլինչյան

Զարգ Հայր

Տիգրան Արքայի
Յան Չույշի Հայր



...



ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Nor Serount Armenian Cultural Association

tel: 429-7948, 293-4841

Ս.Խաչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ և Ս.Խաչ Ազգային
Ամենօրեայ վարժարանի ապահովութեան ու զոյատեւման համար՝ մեծ յոյսով
ենք, Զերդ Սրբազնութեան նախազահած թեմական կեղրոնական վարչութիւնը,
շուտով կը տնօրինէ լաւագոյնը, փրկելով եկեղեցին ու դպրոցը:

Որդիական անկեղծ յարգանքներով ու զգացումներով, կը մաղթենք
ձեր հայրական գործերուն յաջողութիւն, առողջութիւն երշանկութիւն:

Համբուրելով Սուրբ Աջրդ՝ Վարչութիւն նոր Սերունդ Մշակութային
միութեան :

Ատենադպիր

Դաւիթ Հարժակեցելու

Մաէսդրօ՛ Դաւիթ Վարժապետեան

Ատենապետ

Դիվանական Շնորհական

Պետրոս Յ. Սուշեան

